

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱՐԵՎԵԼՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ  
ԱՐԱԲԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

---

ԱՐԱԲԱԳԻՏԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄԸ ԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դ

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

“ՎԱՆ ԱՐՅԱՆ” ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ – 2010

Հրատարակվում է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի  
խորհրդի որոշմամբ

---

ՀՏԴ 809.27:950

ԳՄԴ 81.2 Արաբ+63.3 (5Արաբ)

Ա. 821

Խմբագրական խորհուրդ՝  
բ.գ.թ., դոց. Ս.Տունիկյան (նախագահ),  
բ.գ.թ., Մ. Յավրուսյան,  
պ.գ.թ. Հ. Քոչարյան  
պ.գ.թ. Ա. Հարությունյան

Արագգիտական ուսումնասիրություններ:

Ա. 821 Հոդվածների ժող.- Հ. Դ.- Եր.: 2010.- 144 էջ:

Ժողովածուն նախատեսված է արագագետների, հայագետների, միջնագրագետների,

արևելագիտական, պատմական և

բանասիրական բաժինների ուսանողների, ինչպես նաև

ընթերցող լայն շրջանակի համար:

ԳՄԴ 81.2 Արաբ+63.3 (5Արաբ)

ISBN 978-9939-812-99-1

**Լեզվաբանական ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՏԵԼԻՔԸ Լեզվի  
ԵԿԱՐԱԳՐՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ  
TA'ADDĀ 'ILĀ. ԱՆՅՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՂԵՆ, ՎԱԼԵՆՏԱԿԱՆՈՒԹՅՈՂԵՆ, ԹԵՐ ...**

*ՅԱՎՐՈՒՄՅԱՆ Մ.*

**1. Ներածական դիտարկումներ**

Լեզվաբանության պատմության, պատմագրության կամ լեզվաբանական ուսման մեթոդների պատմության ոլորտի հետազոտություններում շարունակում է արդիական մնալ մեթոդաբանական այնպիսի լուծումների որոնումը, որոնք թույլ են տալիս այս կամ այն շափով հստակեցնել «ժամանակակից ու պատմական» գիտելիքի հարաբերակցության խնդիրը: Արաբագիտության, խոսքի այսուհետ լեզվաբանական արաբագիտության մասին է, զարգացման պատմությունը հարցադրման նման շրջանակում առատ նյութ է ապահովում մեթոդաբանական դիտարկումների համար՝ հաշվի առնելով արաբական լեզվաբանական ավանդույթի (ԱԼԱ) առկայությունն ու ժամանակակից արաբական լեզվաբանության ակամայից պտույտը հզոր այդ ավանդույթի ուղեծրում:

Լեզվաբանական «ժամանակակից ու պատմական գիտելիք» ձևակերպումները հողվածում ժամանակագրորեն չեն հստակեցվում: Պայմանականորեն ընդունվում է, որ պատմական գիտելիքի մասին խոսվելու է միայն արաբական միջնադարյան ֆերականական աշխատությունների ֆննարկման ժամանակ: Ժամանակակից է գնահատվում գիտելիքի այն հատվածը, որն այս կամ այն կերպ արտացոլում է պատմականը՝ ներառված չլինելով պատմական գիտելիքի հարացույցում:

Հողվածում լեզվաբանական գիտելիքը պայմանականորեն ընկալվում է որպես լեզվի մասին պատկերացումների վերածում լեզվի նկարագրության միջոցների: Այս շղթան ներկայանում է որպես որոշակի գործընթաց կամ *լեզվական իրականության արտացոլման տեխնոլոգիա*, ինչի արդյունքում և ձևավորվում է *լեզվաբանական գիտելիքը* կամ գիտելիքի ամբողջությունը՝ ներկայացված որպես *գիտելիքի հարացույց* կամ որպես *տեսություն, մոդել*:

Այսպիսով, պատմական և ժամանակակից գիտելիքներն ընկալվում են որպես որոշակի տեխնոլոգիաների կիրառման արդյունք: Գիտելիքների, հարացույցների, տեսությունների նմանությունները կամ տարբերությունները դիտարկվում են տեխնոլոգիաների կտրվածքում՝ պայմանավորված տեխնոլոգիական ընթացքի նմանություններով կամ տարբերություններով:

Լեզվական իրականությունը դիտարկվում է որպես տեխնոլոգիական կանոնակարգման ենթակա *տվյալների ամբողջություն* կամ *կորպուս*՝ բաց-ընդարձակելի, փակ-ընդարձակելի և փակ-սահմանափակվող տարատեսակներով:

Դրանք տարբերակվում են (*հաշվվող*) բազմություն հասկացության հենքի վրա: Բաց-  
ընդարձակելի և փակ-սահմանափակվող կորպուսները տրամաբանորեն հակադիր են  
միմյանց: Երկուսն էլ ներկայացնում են տվյալների այնպիսի մի բազմություն, որը,  
համապատասխանաբար, մի դեպքում անվերջ է ու այս իմաստով  
ընդարձակվող/անոդ, մյուսում՝ վերջավոր ու այս իմաստով սահմանափակ: Փակ-  
ընդարձակելի կորպուսի դեպքում տվյալների բազմությունն ըստ էության վերջավոր է,  
թեև ընդարձակվող/անոդ: Տվյալների համարման հետ մեկտեղ այսպիսի  
բազմությունը չի փոխում իր էությունը, այն շարունակում է մնալ վերջավոր/հաշվող,  
այս առումով այն փակ է: Բազմությունում յուրաքանչյուր կոնկրետ դեպքում  
տվյալների կոնկրետ ֆանակ է, բազմությունն ունի այդ ֆանակն ընդլայնելու ու այդ  
ընդլայնումը կրկին հաշվելու հնարավորություն՝ այս առումով այն ընդարձակելի է:

Ընդունվում է, սակայն հոդվածի ֆննարկման առարկայից դուրս մնում,  
տվյալների էության (այլ կերպ՝ այս կամ այն լեզվի), տվյալների կորպուսի բնույթի ու  
տեխնոլոգիաների միջև դիալեկտիկական կապի գոյության մասին դրույթը: Ի դեպ,  
ԱԼԱ-ն այս դրույթը փորձում է իմաստավորել Բասրայի և Քուֆայի դպրոցների  
մեթոդաբանական *qiyās/samā'* հակադրությամբ:

Մեթոդաբանական մոտեցումների այս շրջանակում հոդվածը խնդիր ունի  
*ta'addā 'ilā* հասկացության օրինակի հիման վրա դիտարկել պատմական ու  
ժամանակակից գիտելիքների ընկալման փուլերը՝ լեզվաբանական  
արաբագիտության վերջին մի ֆանի տասնամյակների կտրվածքով: Հոդվածի  
նպատակը մեթոդաբանական պնդման հիմնավորումն է, որ լեզվաբանական  
տեխնոլոգիաների անխռաափելի ու շարունակական արդիականացումն  
անպայմանորեն բերելու է պատմական գիտելիքի անդադար վերաիմաստավորման,  
եթե հետազոտական ելակետը պատմական տեխնոլոգիան ժամանակակիցով  
վերակողմորելու ձգտումն է:

**2. Լեզվաբանական արաբագիտությունը մեթոդաբանության հստակեցման  
կտրվածքում**

Լեզվաբանական արաբագիտությունը նվազագույնը երեք խոշոր փուլերի  
ընթացք է: Լեզվաբանական արաբագիտության ձևավորման փուլում այն դեռ ԱԼԱ-ի  
մետալեզվի ու հասկացությունների նկարագրական բացատրություն է, որտեղ դրվող  
միակ խնդիրը ավանդույթի տեխնոլոգիայի հնարավորինս մանրամասն  
վերաշարադրումը, ավելի ճիշտ՝ թարգմանությունն է արաբագիտական ավանդույթի  
այս կամ այն լեզվով՝ գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն, երբեմն էլ անգլերեն:  
Լեզվաբանական ժամանակակից գիտելիքի կիրառումն այս փուլում

«պատահական», ոչ կանոնավոր բնույթ է կրում: Այս փուլի սովորական արդյունքը «դասական կամ գրական» արաբերենի դասագիրքն է կամ ֆերականությունը (հմմտ. Գ. Յահնի, Վ. Բայթի, Կ.-Պ. Կասպարի, Բ.Մ. Գրանդեի, Հ.Ռեկենդորֆի և այլոց աշխատանքները):

Հաջորդ փուլը, որը հնարավոր էր միայն լեզվաբանական ավանդույթի մասին տեղեկությունների բավարար ֆանակի գոյության պայմաններում, այդ տեղեկությունների՝ լեզվաբանական ժամանակակից այս կամ այն տեխնոլոգիայի օգնությամբ մեկնաբանման կամ բացատրման փորձ է: Փուլին բնորոշ են հիմնականում լեզվաբանական ավանդույթի «տրամաբանության» կամ «լոգիկայի» մասին աշխատանքները՝ կոնկրետ հասկացությունների, տերմինների մեկնաբանման, բացատրման, իմաստավորման փորձերի տեսքով: Փուլը, ըստ էության, արաբական ավանդական տեխնոլոգիայի վերակողմնորոշում է ժամանակակից լեզվաբանականով, թեև հետազոտողներից շատերի՝ «արաբական գիտելիքը ներակա (իմանենա) դիտարկելու» պնդումներին: Արդյունքները ժամանակ առ ժամանակ տարբեր էին անգամ նույն հասկացության կամ տերմինի դեպքում՝ լեզվաբանական տարբեր ուղղությունների հետևորդների շրջանում (հմմտ. Յ. Վայսի, Մ. Բրավմանի, Հ. Գաբուլյանի, Ա. Սանչեսի, Ա. Շպիտալերի, Ա. Լևինի, Գ. Վ. Ֆրոլովի, Հ. Բոբբինի, Մ. Քարտերի, Ռ. Տալմոնի, Ք. Վերստեդի, Ռ. Բապրակիի, Ժ. Բոհասի, Պ. Գիլմի և այլոց աշխատանքները):

Երրորդ՝ «արդի» փուլում ուշադրության կենտրոնում արդեն տեխնոլոգիաները չեն, այլ տեխնոլոգիայի հիմքում դրվող տվյալների այս կամ այն բազմությունը: Պատմական ու ժամանակակից գիտելիքներն այս դեպքում ոչ թե համեմատվում, այլ համադրվում են միմյանց՝ ելնելով մեթոդաբանական մոտեցումից, թե տվյալների ինչ կորպուս է ներառում այս կամ այն կոնկրետ հասկացության ամբողջական ընկալումը: Պատմական գիտելիքն այս դեպքում տվյալների որոշակի ֆանակ է նկարագրված ժամանակակից գիտելիքով: Նույնական տվյալների նկարագրությունների համեմատությունը, համադրությունը պատմական ու ժամանակից գիտելիքների միջև նմանություններ կամ տարբերություններ տեսնելու հետազոտական գաղթակղությունն է: Այս փուլում, դիտակետը, այդուհանդերձ, բայց ոչ անխուսափելիորեն, ժամանակակից տեխնոլոգիան է, ֆանի որ հետազոտողը խնդիր ունի դիտարկել, հասկանալ կամ «մյուսների համար ժամանակակիցացնել» պատմականը (հմմտ. Ջ. Օուենս, Գ. Սաադ): Հետազոտական հակադարձ մոտեցումը ևս հնարավոր է՝ պատմականի կտրվածով ժամանակակիցի դիտարկում:

### 3. *ta'addā 'ilā* հասկացությունը արաբական լեզվաբանական ավանդություն և արաբագիտական հետազոտություններում

*ta'addā 'ilā* հասկացության դիտարկումը սահմանափակվելու է արաբական ավանդական ֆերականական ամենավաղ աշխատություններից մեկով՝ Սիբավեյհի (*'Abū Bišr 'Amr b. 'Uṭmān b. Qanbar Sībawayhi*, մահ.՝ 180/793) «Գրքով» (*al-Kitāb*): Ընտրությունը հիմնավորվում է նրանով, որ աշխատությունը ներկայացնում է ԱԼԱ-ի այն ժամանակահատվածը, երբ ավանդույթը տեխնոլոգիաների մշակման փուլում է, ընդ որում, «Գիրքը» այդպիսիների ամբողջական նորմավորման առաջին ու հիմնադրադրախնային փորձերից է: Չնայած ավանդույթի գոյության ընթացքում լեզվաբանական գիտելիքի հարացույցների փոփոխությանը, «Գիրքն» այն սկզբնաղբյուրն է, որում արտացոլված տվյալների, ըստ էության, փակ կորպուսն ու նկարագրական/բացատրական տեխնոլոգիան հետագա զարգացումների հիմքում է:

«Գրքում» *ta'addā 'ilā* հասկացությունը թեև ցրված է ողջ շարադրանքով, բայց ֆննվում է հիմնականում երկու հատվածում:

Առաջինը «Գրքի» այսպես կոչված Ուղերձային առաջին յոթ գլուխներից անմիջապես հետո է՝ 8-15-րդ գլուխներում (*Sībawayhi, al-Kitāb I, 10-15*): Այստեղ, ըստ էության, տրվում կամ թվարկվում են Սիբավեյհի շարահյուսական տեսության հիմքում դրվող աֆսիոմատիկ պատկերացումները, շարահյուսական կապի տեսակները՝ *šāgala bi-* ու *'amal* (լեզվական միավորների ֆերականական ազդեցության, կառավարում), որոնց հետ նույն խմբում ֆննարկվում է նաև *ta'addā 'ilā* հասկացությունը՝ արաբական ավանդույթին բնորոշ ենթախմբերի բազմությամբ:

Երկրորդ հատվածը «Գրքի» դերենբուրջյան հրատարակության երկրորդ հատորում է: Ավանդականորեն ընդունվում է, որ այս հատորն առավելապես ձևաբանական է, ուստի այստեղ *ta'addā 'ilā* հասկացությունը դիտարկվում է բայերի կամ ավելի շուտ պրեդիկատների դասակարգման խնդրի հետ փոխկապակցված հարթությունում: Մասնավորապես, «Քեզանից մեկ ուրիշին անցնող բոլոր բայերի (գործողությունների) մասին գլխում» (*hādā bāb 'ilm kull fi'l ta'addā-ka 'ilā ḡayri-ka; Sībawayhi, al-Kitāb II, 239-240*) այս հասկացությունը, իմաստաբանական և ֆորմալ-ձևաբանական բազմաթիվ այլ ցուցիչների հետ մեկտեղ օգտագործվում է արաբերենի (հնարավոր) բոլոր (*kull*) բայահիմքերի ամբողջական ու ընդգրկուն դասակարգման տեսական նպատակադրույթը կյանքի կոչելու համար:

Ամբողջական ու որևէ միավոր չբացառող նկարագրության նպատակադրույթը Ալ Խալիլ իբն Ահմադից (*al-Xalīl ibn Aḥmad*, մահ. 160/776 կամ 175/791; *Kitāb al-'ayn*) «Ժառանգված» բառարանագրական է: Այն, որպես մեթոդ, բնորոշ է աֆսիոմատիկ դեդուկտիվ համակարգերին: Հոդվածի շրջանակում հնարավոր չէ

ավելի մանրամասն անդրադառնալ խալիլ-սիբավեյհյան, կամ այսպես կոչված բասրայական լեզվաբանական այս մոդելին, պարզապես նշենք նման համակարգերի կարևորագույն մեկ առանձնահատկություն: Ամբողջականության աֆսիբը հիմնվում է նկարագրման ենթակա տվյալների փակ, թեև ընդարձակելի կորպուսի գոյության դրույթի վրա: Մոդելի հիմնում դրվում է նկարագրական հիմնական հատվածին տվյալների նոր բազմության այնպիսի ինտեգրման հնարավորություն, որը մի կողմից չի հակասում մոդելի էությանը, մյուս կողմից՝ ունակ է նկարագրել/բացատրել ինտեգրվող ցանկացած տվյալ:

Ձևաբանական կտրվածում *ta'addā 'ilā* հասկացությունը Սիբավեյհի մոտ տրվում է այսպես կոչված *գործողության բայերի* (*al-'afāl allatī hiya 'a'māl*; §432; *al-Kitāb* II, 224.14հջրդ.) հարացույցների նկարագրման/կազմման ժամանակ, ընդ որում, 'գործողություն' իմույթը երկբևեռվում է '*ta'addā 'ilā*' (անցնել, հանգել) իմաստաբանական մարկերի միջոցով.

*al-'afāl allatī hiya 'a'māl: {ta'addā-ka 'ilā ḡayri-ka wa-tūqī'u-hā bi-hi (al-Kitāb II, 224.14) vs. lam yata'adda 'ilā manṣūb (al-Kitāb II, 226.9)}* - 'գործողություն ցույց տվող բայեր, {որը բեզանից [ենթակա] անցնում ու ինչ-որ մեկի [ինչ-որ բանի՝ խնդիր] վրա ու հանգում նրան vs. որը չի անցնում թեմական ձևով դրված ձևի վրա}':

Պատմական գիտելիքի ֆենարկման ժամանակակից դիտանկյունը շարադրամբում ապահովելու են լեզվաբանական տեսական հետևյալ պատկերացումները (Храковский 1979; Мельчук 1999): Տեղեկությունը, որը պարտադիր (օրիգատոր) կերպով բովանդակում է նախադասությունը համարժեք է այն բայի բառարանագրական մեկնաբանմանը (բացատրմանը), որը տվյալ նախադասության կառուցվածքում հիերարխիկ ամենաբարձր (առաջին) տեղում է:<sup>1</sup> Բայը միաժամանակ նաև *ստորոգիչ* (*պրեդիկատոր*) է, որը ներկայացնում է որոշակի կոնկրետ իրադրություն և կարող է մեկնաբանվել այլ ստորոգիչների և *իրավիճակի մասնակիցների* (*պարտիսիպիանտ*) միջոցով: Ստորոգիչի միջոցով ներկայացվող իրավիճակի բառարանագրական մեկնաբանությունը կարող է բազմաթիվ մասնակիցներ պարունակել: Այս առումով ստորոգիչները հնարավոր է բաժանել ըստ իրավիճակում առկա տեղերի կամ մասնակիցների ֆանակի՝ *միտեղանի՝ մասնակից*  $\rho(X)$ , *երկտեղանի՝ տեսնել*  $\rho(X, Y)$ , *եռատեղանի՝ տալ*  $\rho(X, Y, Z)$  ստորոգիչներ:

Բայով արտահայտված յուրաքանչյուր իրավիճակ անհատական է, ի տարբերություն մասնակիցների, որոնք ոչ միայն անհատական, միայն այդ

<sup>1</sup> Սա «իրերի իրական դրության» չափազանց կոպիտ ներկայացում է, քանի որ նախադասությունը պարունակում է նաև 'ժամանակ', 'եղանակ' և այլն իմաստներ, որոնք բացակայում են բայի բառարանագրական մեկնաբանման ժամանակ:

իրավիճակին բնորոշ հատկություններ են արտահայտում, այլ ունեն վերիրավիճակային հատկություններ՝ համընդհանուր բազմաթիվ առանձին իրավիճակների համար: Խոսքն այստեղ *գործող, պացիենտ, մասնակից, ներգրավվող, հասցեատեր/թիրախ, գործիք* և այլն իմաստաբանական դերեր կամ խորհային հոլովներ հայտնի հասկացությունների մասին է<sup>2</sup>: Իրավիճակի նկարագրության ժամանակ մասնակիցների միջև ձևավորվում են աստիճանակարգային, հիերարխիկ հարաբերություններ: Որպես հիմնական է գնահատվում այնպիսի հիերարխիան, որտեղ զբոյական կամ երկային աստիճանում իրավիճակն է ( $\rho$ ), առաջին աստիճանում՝ գործողը (*Agent - X*), երկրորդում՝ պացիենտը (*Patient - Y*), իսկ մյուսներում՝ այլ մասնակիցները (*Z*):

Յուրաքանչյուր առանձին, անհատական իրավիճակ ոչ միայն հիերարխիկ դասավորված մասնակիցներ ունի, այլև *բնութագրիչներ* (լրացումներ), որոնք ներառված չեն հիերարխիկ այս կառուցվածքում: Ի տարբերություն մասնակիցների, բնութագրիչները, ինչպես օրինակ՝ *վայր, ժամանակ, եղանակ, միջոց, կերպ* և այլն, իրավիճակի բառարանագրական մեկնաբանման մաս չեն ու կոնկրետ իրավիճակից իմաստաբանորեն *անկախ* (!) են:

Բայի բառարանագրական մեկնաբանումից դեպի տվյալ բայը պարունակող նախադասություն անցումը ներկայանում է որպես մասնակիցներից յուրաքանչյուրին բառարանային կոնկրետ իմաստի վերագրման ընթացք. սա անվանվելու է *Իմաստ* → *տեքստ անցում*:<sup>3</sup> Այսպիսով, նախադասությունը կարող է տեղեկությունների երկու տարատեսակ պարունակել.

- *պարտադիր* տեղեկություններ (կոնկրետ իրավիճակի մասնակիցների մասին). այդպիսի պարունակում է տվյալ բայով ցանկացած նախադասություն,
- *հնարավոր*, սակայն ոչ *պարտադիր* տեղեկություններ (բնութագրիչների մասին). այդպիսիների առկայությունը կամ բացակայությունը պայմանավորված չէ տվյալ բայով ներկայացվող իրավիճակով:

Իրավիճակները, մասնակիցներն ու բնութագրիչները նախադասություններում արտահայտվում են շարահյուսական կառույցի տարրերի, այլ կերպ ասած, նախադասության անդամների միջոցով: Իրավիճակն արտահայտվում է նախադասության միջուկի՝ ստորոգյալի, նրա մասնակիցները՝ ակտանտների

<sup>2</sup> «Խորհային հոլովների» կամ «իմաստաբանական դերերի» մասին ավելի մանրամասն, ինչպես նաև տեսության զարգացման փուլերը, արդի զարգացումները, համառոտ գրականության ցանկ, տե՛ս, օր. (Плугин 2003:165):

<sup>3</sup> Մոտեցումը մշակվում էր Իմաստաբանական մոսկովյան դպրոցի շրջանակում: Մոդելի վերջին տարիների զարգացման ընթացքի մասին՝ (Мельчук 1999; Bolshakov & Gelbukh 2000):

(ենթակա, լրացումներ), բնութագրիչները՝ սիրկոնստանտների (պարագաների) միջոցով:

Նախադասության կառուցվածքը ևս հիերարխիկ է: Առաջին աստիճանում միջուկն է, որը մյուս տարրերի բացակայության դեպքում ևս շարահյուսական ինֆնուորոյն կառույց կարող է ձևավորել: Նախադասության միջուկից կախյալ են ակտանտները, որոնք միմյանցից տարբերվում են կախվածության աստիճանով: Առաջին աստիճանում առաջին ակտանտն է (ենթական), երկրորդ աստիճանում՝ երկրորդ ակտանտը (առաջին (ուղիղ) խնդիրը), երրորդ աստիճանում՝ երրորդ ակտանտը (երկրորդ (անուղղակի) խնդիրը): Սիրկոնստանտները դուրս են այս հիերարխիայից և կցվում են նախադասության միջուկին կամ ակտանտներին: Բայերը հնարավոր է դասակարգել կախյալ ակտանտների թվով (=վալենտականություն)՝ որպես *ավալենտ*, *միավալենտ*, *երկվալենտ*, *եռավալենտ* բայեր (Tesnière 1980:161):

### 3.1. *ta'addā 'ilā* հասկացությունը ձևաշարահյուսական ու իմաստաբանական կտրվածքում

ԱԼԱ-ի *ta'addā 'ilā* vs. *lā yata'addā 'ilā* հակադրումը լեզվաբանական արաբագիտությունը, որպես կանոն, մեկնաբանում է անցողականություն/անանցողականություն տերմինաբանական զույգի միջոցով: Ընդ որում, մեկնաբանությունները հիմնվում են անցողականության «բովանդակային» սահմանումների վրա: Այն ընկալվում է որպես բայում արտահայտված գործողության (լայն իմաստով՝ որպես գործունեություն, արարք, իրադարձություն և այլն) անցում գործողից (*Agent*) պացիենտի (*Patient*) (Givon 1990:565; Вежбицка 1999:67):

Արաբագիտական մի շարք հետազոտություններ ևս ֆննում են անցողականություն հասկացությունը Սիբավեյհի, ինչպես նաև ավելի ուշ շրջանի ֆերականագետների աշխատանքներում (Mosel 1975:65; Versteegh 1977:82-83; Levin 1979; Saad 1979, 1982, 1983; Bobzin 1983; Owens 1988:168-172): Ընդ որում, ֆննարկումների հիմքում հարցադրումն է, թե *ta'addā*-ն որպես նկարագրական մոդելի տեխնիկական միջոց, ինչպիսի բովանդակությամբ է օգտագործվում արաբական ֆերականական ուսմունքներում: Մինչ այժմ ձևավորված հիմնական մոտեցումները երկուսն են.

– որպես ձևաշարահյուսական երևույթ *ta'addā*-ն միայն բայ ենթադասով սահմանափակվող լեզվական միավորների ֆերականական ազդեցության՝ *'amal*-ի (կառավարում) տարատեսակ է. *ta'addā* ~ 'կառավարել (թեֆական *naṣb* ձևով)

հայցականով՝ (Levin 1979); *ta'addā* ~ '(թեֆական *naṣb* ձև պայմանավորվող) վայենտականություն' (Bobzin 1983:95):

– Որպես իմաստաբանական երևույթ *ta'addā*-ն վերաբերում է բայում արտահայտված գործողությանը՝ որպես այդպիսին (Versteegh 1977:82-83): Ընդ որում, գործողությունն (*fi'l*) այս դեպքում ընկալվում է չափազանց լայն՝ ոչ միայն 'բայում նրա բայանունով արտահայտվող գործունեություն' այլ 'այն ամենը, ինչ կարելի է վերաձևակերպել տվյալ բայանունով' (Sībawayhi, *al-Kitāb* I, 10.19; 11.7):

Պայմանավորված ֆննարկման հարթությամբ՝ Սիբավեյհը դիտարկում է այս հասկացության ինչպես (ձևա-)շարահյուսական ասպեկտը՝ որպես շարահյուսական կապի կամ կառավարման տարատեսակ (§3; *al-Kitāb* I, 10.3հջրդ.), այնպես էլ իմաստաբանականը՝ դիտարկելով այն որպես բայում արտահայտված գործողության անցում կամ հանգեցում՝ անցողականություն (§432; *al-Kitāb* II, 224.14հջրդ.): Նման դիտակետ են առաջարկում նաև Սիբավեյհի շարահյուսական գործիքակազմի մասին Ա.Լևինի պնդումները. հմմտ.՝ «Փաստ է, որ Սիբավեյհի որոշ ձևակերպումներում, ինչպես *a'mālan ta'addāka ilā ḡayrika* կամ *kullu 'amalin lam yata'adda ilā mansūbin*, *ta'addā*-ն բացահայտորեն նշանակում է բայում արտահայտված գործողություն: Սակայն դա չի ենթադրում, որ այլ դեպքերում այն չի կարող շտնշվել գործողությանը: Չի բացառվում, որ Սիբավեյհը *'amal* (=գործողություն) և *'a'māl* (=գործողություններ) բառերը *ta'addā*-ի համատեքստում [...] օգտագործում է տարբերակելու համար *ta'addā*-ի *ավանդական նշանակությունը*՝ բայի ֆերականական ազդեցությունը, նրա *հազվադեպ նշանակությունից*՝ բայում արտահայտված գործողությունից [շեղագրումը՝ Մ.3.]: Ենթադրությունը, որ *ta'addā*-ն վերաբերում է բայերի *'amal*-ին, և ոչ թե նրանցում արտահայտված գործողությանը, պայմանավորված է հանգամանքով, որ Սիբավեյհի «Գրքի» 1-ին հատորում անցողական և անանցողական բայերի ֆննարկումն առավելապես շարահյուսական է: Ավելին, Սիբավեյհին այստեղ հետաքրքրում է *'amal*-ը, և ոչ թե բայում արտահայտված գործողության տեսակը: [...] Եվ, ընդհակառակը, [...] *ta'addā* բայը Սիբավեյհի մոտ որոշ դեպքերում ցույց է տալիս բայի գործողությունը, որը փոխանցվում, անցնում է կոնկրետ ենթակայից (սուբյեկտից) կոնկրետ խնդրի (օբյեկտի), ինչպես *al-af'ālu allatī hiya 'a'mālan ta'addāka ilā ḡayrika*-ի դեպքում է» (Levin 1979:208, թարգմանությունը՝ Մ.3.):<sup>4</sup>

<sup>4</sup> Հմմտ.՝ „The fact that Sībawayhi uses such expressions as *a'mālan ta'addāka ilā ḡayrika* and *kullu 'amalin lam yata'adda ilā mansūbin*, in which *ta'addā* refers explicitly to the act of the verb, does not mean that on other occasion it does not refer to the act. It is not impossible that Sībawayhi mentions the words *'amal* (=act) and *'a'māl* (=acts) in context with *ta'addā* in the above examples in order to make a distinction between the *habitual use of ta'addā*, referring to the grammatical effect of the verb, and its *rare usage* [շեղագրումը՝ Մ.3.], referring to the act expressed by the verb. The assumption that *ta'addā*

*ta'addā* հասկացության երկու այս՝ կառավարում *vs.* *անցողականություն* կտրվածքները քննարկողներն ամփոփում է Ջ.Օուենսը (Owens 1988:168-172), ում ինչ-որ առումով հաշտվում է հարթել հակադրությունը՝ հասկացությունը դիտարկելով որպես. «*Ta'addā*-ն Սիբավեյհի համար ներառում է երկու անուն՝ միմյանց միջև տեղի ունեցող (կամ տեղի չունեցող) ինչ-որ «գործողության» նշանակությամբ (գործողության անորոշ ինչ-որ տեսակ, որը չի բացառում թեմական ձևի կիրառում): Ի տարբերություն կառավարման (*amal*), խոսք չկա կառավարողն ու կառավարելին միմյանց կապող որևէ բանի մասին» (Owens 1988:172, թարգմանությունը՝ Մ.Յ.):<sup>5</sup>

### 3.2. *ta'addā* հասկացությունը որպես վալենտականություն

*ta'addā* հասկացության իմաստաբանական-չարահյուսական բովանդակային սահմանները քննարկում է նաև Ջ.Սաադը (Saad 1979), ով այս հասկացության հետ առնչվող ու Սիբավեյհի կողմից ներկայացվող օրինակները դասակարգում է որպես միտեղանի ներգործական (1a.) կամ կրավորական սեռի (1b.) ուղղական հոլովով դրված պարտադիր ենթակա ունեցող անանցողական բայեր (*al-'afāl ḡayr al-mudā'addiya*): Մյուս խմբում (*al-'afāl al-mudā'addiya*) երկտեղանի ներգործական (2a.) և կրավորական սեռի (2b.), երեփտեղանի ներգործական (3a.) կամ կրավորական սեռի (3b.), և չորստեղանի միայն ներգործական սեռի (4a.) անցողական բայեր (*al-'afāl al-mudā'addiya*) են, ուղղական հոլովով դրվող պարտադիր ենթակայով ու, համապատասխանաբար, մեկ, երկու և երեք խնդիրներով (Saad 1979:85), օրինակները՝ (Sībawayhi, *al-Kitāb* I, 10.3հջրդ):

- 1a. *dahaba zayd-un* ~ 'Ջեյդը-NOM գնաց'
- 1b. *ḡuriba zayd-un* ~ 'Ջեյդին-NOM հարվածեցին-PAS'
- 2a. *daraba 'abd-u allāhi zayd-an* ~ 'Աբդալահը-NOM հարվածեց Ջեյդին-ACC'
- 2b. *uṭiya 'abd-u allāhi al-māl-a* ~ 'Աբդալահին-NOM գումար-ACC տվեցին-PAS'

refers to the *'amal* of the verbs, and not to its act, is strengthened by the fact, that the discussion of the transitive and intransitive verb in Vol.I of Sībawayhi's book is mainly syntactical. Therefore, Sībawayhi is there mainly interested in the *'amal* of the verb, and not in the kind of act expressed by it. The principle of *'amal*, which is of great importance in this discussion, is taken into consideration by Sībawayhi with respect to the internal arrangement of the discussion. In contrast to what has been said above, the verb *ta'addā* refers in some cases in Sībawayhi to the act of the verb, which is transferred from a certain subject to a certain object, as in the example *al-'afālu allatī hiya a'mālun ta'addāka ilā ḡayrika*."

<sup>5</sup> Հմմտ.՝ „*Ta'addā* for Sībawayhi involves two nouns with some sort of “action” (of an unspecified sort; one cannot rule out the action of determining case form) passing (or failing to) between them. In a relation of *'amal* “governance”, by contrast, nothing is said to move between the governor and governed.“

3a. 'aṭā 'abd-u allāhi zayd-an dirham-an ~ 'Աբդալահր-NOM Զեյդին-ACC գումար-ACC տվեց'

3b. 'urā 'abd-a allāhi 'ab-ā fulānin ~ 'Ինն-NOM ցույց-տվեցին-PAS Աբդալահին-ACC ինչ որ մեկի հորը-ACC'

4a. 'arā allāh-u bišr-an zayd-an 'ab-ā-ka ~ 'Ալահը-NOM ցույց-տվեց Բիշրին-ACC Զեյդին-ACC' fn հորը-ACC'

Ձ.Սաադը պնդում է, որ Սիբավեյհի նկարագրական մոդելը ներգործական ու կրավորական տիպի կառույցները շարահյուսորեն միմյանցից անկախ է դիտարկում (տե՛ս 3.4.), կառույցների միջև կապի հնարավոր միակ տեսակը իմաստաբանական է: Կրավորական կառույցների ենթական, անկախ նրանից կրավորական բայն «անցողական» է, թե «անանցողական» (*fi'l al-maf'ūl* ~ 'խնդրի բայ'), անվանվում է *maf'ūl* (*Patient*) (*Sībawayhi, al-Kitāb I, 10.3* հջրդ.): Սա նույն տերմինն է, որն օգտագործվում է ներգործական սեռի անցողական բայի (*fi'l al-fā'il* ~ 'գործողի բայ') խնդիրը նշելու համար: Այսպիսով, կրավորական սեռի բայի ենթական ու ներգործական սեռի բայի խնդիրը համապատասխան շարահյուսական կառույցներում ունեն միևնույն նշանակությունը (*ma'nā*) *Patient* իմաստաբանական դերը (*maf'ūl*), թեև տարբերվում են թեմական վերջավորություններ՝ NOM/ACC:

Նշենք, որ կրավորական սեռի բայերը Սիբավեյհի համար ածանցյալ են միայն ձևաբանական մակարդակում՝ ներգործական սեռի համապատասխան բայաձևից (*al-Kitāb II, 253.5-12; §447*): Այդ իսկ պատճառով էլ կրավորական բայերը կարող են վերոհիշյալ կառույցներում ինչպես «անանցողական» (1b.), այնպես էլ անցողական (2b.; 3b.) դիտարկվել, ինչն արտադրային է այս տերմինի «ավանդական» հնդեվրոպական» ընկալման պայմաններում:

Շարահյուսական դիրքերը հաջորդականությունը հետևյալն է այս կառույցներում.

– <sup>1</sup>*fi'l* + <sup>2</sup>*maf'ūl*<sub>NOM</sub> - «անանցողական» կրավորական բայով շարահյուսական կառույց. <sup>1</sup>*ḍuriba* <sup>2</sup>*zayd-un* ~ <sup>1</sup>*Զեյդին-Nom* <sup>2</sup>*հարվածեցին-PAS*

– <sup>1</sup>*fi'l* + <sup>2</sup>*maf'ūl*<sub>NOM</sub> + <sup>3</sup>*maf'ūl* *āxar*<sub>ACC</sub> - «անցողական» կրավորական բայով շարահյուսական կառույց. <sup>1</sup>*u* <sup>2</sup>*ṭiya* <sup>2</sup>(*abd-u allāhi*) <sup>3</sup>*al-māla* ~ <sup>2</sup>*Աբդալահին-Nom* <sup>3</sup>*գումար-ACC* <sup>1</sup>*տվեցին-PAS*

Այսպիսով, կարելի է պնդել, որ Սիբավեյհը բայերի շարահյուսական հատկություններն ավելի լայն համատեքստում է դիտարկում, որը հիմնված չէ միայն շարահյուսության ու իմաստաբանության (այլ կերպ՝ խորհային ու մակերեսային հոլովների, կամ միտեղանի, երկտեղանի և այլն բայեր հասկացությունների) կապի

վրա: Այն հաշվի է առնում նաև կապը շարահյուսության ու ձևաբանության միջև, ինչպես վկայում է կրավորական կառույցների մեկնաբանումը:

*ta'addā* հասկացության ընկալման նման սահմաններն ընդհանուր առմամբ հիշեցնում են *վալենտականություն* հասկացությունը, որը միավորում է ավանդական *անցողականություն* ու *կառավարում* տերմինները և ընդլայնում վերջիններիս կիրառման շրջանակները: Վալենտականությունը շարահյուսական միջուկի շրջանակում բայի կողմից պահանջվող անդամների (ակտանտների) գուտ ֆանակը չէ: Հասկացությունը բացատրում է նաև, թե տարբեր բայերի կողմից պահանջվող նախադասության առանձին անդամները (ակտանտները) ինչով են միմյանցից տարբերվում (Lyons 1983:110):<sup>6</sup> Բայերը միմյանցից տարբերվում են իրենց վալենտականությամբ՝ նրանցից յուրաքանչյուրը որոշակի վալենտականություն, ասել է թե՛ բայից որոշակի ֆանակով ու որոշակի կերպով (խոսքը խորհային հոլովների կամ իմաստաբանական դերերի մասին է) կախյալ նախադասության անդամներ ունի:

Վալենտականության այսպիսի սահմանման դեպքում կարելի է պնդել, որ Սիբավեյհի «անցողական» ու «անանցողական» բայերով շարահյուսական վերոնշյալ կառույցներում բայերը միմյանցից տարբերվում են իրենց վալենտականությամբ, իսկ *ta'addā*-ն այս դեպքում ավելի շուտ վալենտականություն է՝ անկախ (!) բայական սեռի մասին պատկերացումներից (տե՛ս 3.4.), հետևյալ դասակարգմամբ.

1. Միավալենտ բայեր (*al-Kitāb* I, 10.13-20):

1.1. *ḡahaba zayd-un*

V + SUB<sub>NOM</sub>(=*fā'il<sub>A</sub>*)

1.2. *ḡuriba zayd-un*

V + SUB<sub>NOM</sub>(=*maf'ūl<sub>PAT</sub>*)

2. Երկվալենտ բայեր (*al-Kitāb* I.10.21flg.; 14.17flg.):

2.1. *ḡaraba 'abd-u allāhi zayd-an*

V + SUB<sub>NOM</sub>(=*fā'il<sub>A</sub>*) + OBJ<sub>ACC</sub>(=*maf'ūl<sub>PAT</sub>*)

2.2. *'uṭiya 'abd-u allāhi al-māl-a*

V + SUB<sub>NOM</sub>(=*maf'ūl<sub>PAT</sub>*) + OBJ<sub>ACC</sub>(=*maf'ūl 'axar<sub>PAT</sub>*)

<sup>6</sup> Վալենտականության տեսությունը կապվում է Լ.Տենիերի անվան հետ: Հասկացությունը վերջինիս աշխատություններում ակտանտների այն ֆանակն էր, որը կարող էր կառավարել բայը (Tesièrè 1980:161հջող.):

3. Եռավալենոս բայեր

3.1. {միմյանցից անկախ խնդիրներով }<sup>7</sup> (*al-Kitāb* I, 12.12flg.):

'a'tā 'abd-u allāhi zayd-an dirhām-an	'a'tā 'abd-u allāhi zayd-an
	'a'tā 'abd-u allāhi dirhām-an
V + SUB <sub>NOM</sub> (=fā'il <sub>A</sub> )	+ {OBJ <sub>ACC</sub> (=maf'ūl <sub>PAT</sub> )}
	+ {OBJ <sub>ACC</sub> (=maf'ūl <sub>PAT</sub> )}
3.1.1. ixtartu 'abd-a allāhi min ar-rijāl-i → ixtartu ar-rijāl-a 'abd-a allāh-a	
ixtartu ar-rijāl-a 'abd-a allāh-a	ixtartu ar-rijāl-a
	ixtartu 'abd-a allāh-a
	+ {OBJ <sub>ACC</sub> (=maf'ūl <sub>PAT</sub> )}
V + SUB <sub>NOM</sub> (=fā'il <sub>A</sub> )	+ {OBJ <sub>ACC</sub> (=maf'ūl <sub>PAT</sub> )}

3.2. [միմյանցից կախյալ խնդիրներով] (*al-Kitāb* I, 15.9-17):

'urā 'abd-a allāhi 'ab-ā fulānin  
 V + (SUB<sub>NOM</sub>=maf'ūl<sub>PAT</sub>) + [(OBJ<sub>ACC</sub>=maf'ūl 'axar<sub>PAT</sub>) + (OBJ<sub>ACC</sub>=maf'ūl 'axar<sub>PAT</sub>)]

4. Եռավալենոս բայեր [միմյանցից կախյալ խնդիրներով] (*al-Kitāb* I, 13.12flg.):

ḥasiba 'abd-u allāhi zayd-an bakr-an  
 V + SUB<sub>NOM</sub>(=fā'il<sub>A</sub>) + [OBJ<sub>ACC</sub>(=maf'ūl<sub>PAT</sub>) + OBJ<sub>ACC</sub>(=maf'ūl<sub>PAT</sub>)]

5. Քստավալենոս բայեր [միմյանցից կախյալ խնդիրներով] (*al-Kitāb* I, 14.8-16; 14.17flg.)

'arā allāh-u zayd-an bašr-an 'ab-ā-ka  
 V+SUB<sub>NOM</sub>(=fā'il<sub>A</sub>)+[OBJ<sub>ACC</sub>(=maf'ūl<sub>PAT</sub>)+OBJ<sub>ACC</sub>(=maf'ūl<sub>PAT</sub>)+OBJ<sub>ACC</sub>(=maf'ūl<sub>PAT</sub>)]

3.3.ta'addā հասկացությունը որպես բայում արտահայտված գործողության (fi'l) «անցողականություն»

ta'addā հասկացության շարահյուսական-իմաստաբանական էության ընկալման համար կարևոր են շարահյուսական մակարդակում ակտանտների, սիրկոնստանտների, իմաստաբանական մակարդակում իրավիճակի մասնակիցների, բնութագրիչների և հիմնական դիատեզի միջև կապի մասին հնարավոր պատկերացումները:

<sup>7</sup> Խնդիրների միմյանցից «կախյալության» մասին պնդումը Ջ.Օուենսը (Owens 1988:173-175) նկարագրում է որպես «խնդիրների ոչ պարտադիր, ֆակուլտատիվ» լինելու հնարավորություն (Optionality): Հ.Բոբզինը (Bobzin 1983:100) այն դիտարկվում է որպես բայի «միայն մեկ maf'ūl-ով «սահմանափակվելու, բավարարվելու» ունակություն» պայմանով, որ հավանական երկրորդ maf'ūl-ի համար պահպանվելու է նրա շարահյուսական դիրքը:

*ta'addā* հասկացությունը որպես անցողականություն մեկնաբանելիս վերոնշյալ արաբագիտական բոլոր աշխատանքներում այն սահմանվում է որպես՝ «Բայում արտահայտված գործողության (*fi'l*) անցում ենթակայից (*fā'il* կամ *maf'ūl*) խնդրին (*maf'ūl* կամ *maf'ūl 'axar*)»: Սակայն, ըստ Սիբավեյհի, բայում արտահայտված գործողությունը կարող է անցնել (հանգել) ոչ միայն խնդրին (*maf'ūl* կամ *maf'ūl 'axar*), այլև շարահյուսական կառուցվածքում, ավելի շուտ շարահյուսական միջուկում ներառվող այլ անդամներին: Ի դեպ, այդպիսի անդամներին կարող է անցնել անգամ «անանցողական» բայերում արտահայտվող գործողությունը: Դրանք Սիբավեյհի մոդելում դեռևս ընդհանրական անվանում չունեն (*Sībawayhi, al-Kitāb I, 11.5*; հմմտ. նաև Mosel 1975:66հջրդ.)՝

*al-fi'l, alladī lā yata'addā l-fā'il, yata'addā 'ilā [...] ~ 'բայ, որը գործողից (ենթակայից) չի անցնում (հանգում) [խնդրին] [այլ կերպ ասած «անանցողական է»], անցնում է (հանգում է) [այլ կերպ՝ «անցողական է»] ...*

1. *ism al-ḥadaṭān (al-Kitāb I, 11.5հջրդ.) ~ '(անցնում է) գործողության անվանը՝*

*V + SUB<sub>NOM</sub>(=fā'il<sub>A</sub>) + ism al-ḥadaṭān<sub>ACC</sub>(=որը maf'ūl չէ)*

*ḍahaba 'abdu allāhi aḍ-ḍahāba š-šadīda ~ 'Աբդալահը հեռացավ սաստիկ հեռանալով՝, այսինքն՝ 'Աբդալահը թողեց հեռացավ՝*

2. *al-marra min-hu wa-l-marratayn wa-mā kāna ḍarban min-hu [min al-ḥadaṭ] (al-Kitāb I, 11.10 հջրդ.) ~ '(անցնում է) նրանից [գործողության անվան] մեկ կամ երկու անգամի վրա կամ այն բանի վրա, ինչ դրա [գործողության անվան] կերպ է՝*

2.1. *'երկու անգամ գործողության անունից՝*

*V + SUB<sub>NOM</sub>(=fā'il<sub>A</sub>) + marratayn min-hu<sub>ACC</sub>(=որը maf'ūl չէ)*

*qa'ada qa'adatayni ~ 'Նա նստեց երկու անգամ նստելով՝, այսինքն՝ 'Նա նստեց երկու անգամ՝*

2.2. *'գործողության անվան որևէ կոնկրետ կերպ՝*

*V + SUB<sub>NOM</sub>(=fā'il<sub>A</sub>) + ḍarb min-hu<sub>ACC</sub>(=որը maf'ūl չէ)*

*qa'ada l-qurfuṣā'a ~ 'Նա նստեց ծնկների վրա՝*

3. *az-zamān (al-Kitāb I, 11.12հջրդ.) ~ '(անցնում է) գործողության անվան ժամանակահատվածին՝*

*V + SUB<sub>NOM</sub>(=fā'il<sub>A</sub>) + az-zamān<sub>ACC</sub>(=որը ո՛չ maf'ūl է, ո՛չ էլ zarf)*

*ḍahaba ~ 'Նա հեռացավ [ժամանակահատվածը՝ անցյալում]՝<sup>8</sup>*

*qa'ada šahrayn ~ 'Նա մնաց երկու ամիս՝<sup>9</sup>*

<sup>8</sup> Հմմտ.՝ «fa-'idā qāla ḍahaba fa-huwa dalīl 'alā 'anna l-ḥadaṭ fīmā maḍā min az-zamān» (*Sībawayhi, al-Kitāb I, 11.13*):

4. *kull mā štuqqa min lafz al-fi'l li-l-makān wa-'ilā l-makān* (*al-Kitāb* I, 11.17հջրդ.) ~ '(անցնում է) այն ամենի վրա, ինչ ածանցված է նրա արտասանությունից (*lafz*) ու վայր է ցույց տալիս, կամ տեղանուն է (*ism makān*)'

4.1. 'վայր ցույց տվող ածանցած անուն'

V + SUB<sub>NOM</sub>(=*fā'il<sub>A</sub>*) + *mā uštuqqa min lafz al-fi'l li-l-makān*<sub>ACC</sub>(=*որը* ո՛չ *maf'ūl* է, ո՛չ էլ *zarf*)

*dahabtu l-madhaba l-ba'ida* ~ 'ես հեռացա հեռու նանապարհով'

*jalastu majlisan hasanan* ~ 'ես նստեցի գեղեցիկ մի (նստա)վայրում'

4.2. 'անորոշ տեղանուն'

V + SUB<sub>NOM</sub>(=*fā'il<sub>A</sub>*) + '*ilā l-makān*<sub>ACC</sub>(=*որը* ո՛չ *maf'ūl* է, ո՛չ էլ *zarf*)

*qa'adtu l-makāna alladī ra'ayta* ~ 'ես նստեցի մի տեղում, որն արդեն տեսել ես'

*dahabti wajhan min al-wujūh* ~ 'Դու հեռացար ինչ-որ ուղղությամբ'

5. *mā kāna waqtan fi l-'amākin wa-l-'azmina* (*al-Kitāb* I, 12.1հջրդ.) ~ '(անցնում է) այն ամենի վրա, ինչ հատված կամ պահ է (*waqt*) է տարածության ('*amākin*) կամ ժամանակի ('*azmina*) ընթացքի մեջ'

5.1. 'հատված (*waqt*) տարածության ('*amākin*) մեջ'

V + SUB<sub>NOM</sub>(=*fā'il<sub>A</sub>*) + *waqtan fi l-'amākin*<sub>ACC</sub>(=*որը* ո՛չ *maf'ūl* է, ո՛չ էլ *zarf*)

*dahabtu farsaxayni* ~ 'ես ֆայլեցի երկու ֆարսանգ'

5.2. 'պահ (*waqt*) ժամանակի ('*azmina*) մեջ'

V + SUB<sub>NOM</sub>(=*fā'il<sub>A</sub>*) + *waqtan fi ... wa-l-'azmina*<sub>ACC</sub>(=*որը* ո՛չ *maf'ūl* է, ո՛չ էլ *zarf*)

*dahabtu šahrayni* ~ 'ես ֆայլեցի երկու ամիս'

*sirtu yawmayni* ~ 'ես գնացի երկու օր'

Այսպիսով, բերված օրինակներում նախադասության անդամներում արտահայտվում են իմաստաբանական այնպիսի տեղեկություններ, որոնք, համաձայն սիբավեհյան պնդման, լրացուցիչ պարունակում է բայը՝ որպես իրավիճակի ստորոգիչ: Իմաստաբանական այս տեղեկություններն ունեն շարահյուսական կոնկրետ ձևավորում, նախադասության կոնկրետ անդամներ են:<sup>9</sup> Դրանք իրավիճակի այնպիսի բնութագրիչներ են, որոնք ի տարբերություն վերը նշված *իմաստ* → *տեքստ անցում* մոդելում կոնկրետ իրավիճակից անկախ ու ընդհանուր բնութագրիչների, այս դեպքում *կախյալ* են կոնկրետ իրավիճակից (*իրավիճակահեն բնութագրիչներ*) ու իրավիճակի մասնակիցների հետ մեկտեղ տվյալ իրավիճակի

<sup>9</sup> Հմմտ.՝ «fi-hi 'istidlāl 'alā wuqū' al-ḥadaṭ wa-dālika qawlu-ka qa'ada šahrayn wa-sayaq'udu šayhrayn [...] fa-'in šī'ta lam taj'al-humā zarfan» (Sībawayhi, *al-Kitāb* I, 11.14-16):

<sup>10</sup> Քեև (միմյանցից կախյալ երեք խնդիրներով) ֆառավալենտ բայերի դեպքում գործողության նման «անցողականություն» հնարավոր չէ (Sībawayhi, *al-Kitāb* I, 14.11-16):

մասին ընդհանուր իմաստաբանական տեղեկությունների մաս են կազմում:<sup>11</sup> Ի դեպ, դրանք Սիբավեյհի մոտ ընդգրկվում են այն բայերի հետ միևնույն գլխում, որտեղ ֆննվում են միայն մեկ խնդրով անցողական բայերը (§10; *hāqā bāb al-fā'il alladī yata'addā-hu fi'lu-hu ilā maf'ūl*; *Sībawayhi, al-Kitāb I, 11-14*): Ընդ որում, օրինակներում նշվող բոլոր բայերը (*dahaba, qa'ada, jalasa* և այլն) «անանցողական» են դասական ընկալմամբ ու *gayr muta'addī* Սիբավեյհի մոտ:<sup>12</sup>

Այսպիսով, *ta'addā* հասկացությունն այս դեպքում ստորոգիչում (իմաստաբանական կտրված) ու բայում (շարահյուսական կտրված) արտահայտված գործողության (լայն իմաստով, որպես *al-muḥaddat bi-hi 'an al-'asma'*; *Sībawayhi, al-Kitāb I, 10.19*) այնպիսի մի հատկանիշ է, որը

– կա՛մ առաջին ակտանտից (առաջին մասնակցից) անցնում (հանգում) է ինչպես երկրորդ, երրորդ ակտանտներին (հիերարխիկ ավելի ցածր մասնակիցներին), այնպես էլ իրավիճակում «պարտադիր (կախյալ) բնութագրիչներին»<sup>13</sup>,

– կա՛մ էլ առաջին ակտանտից (առաջին մասնակցից) անցնում է միայն «պարտադիր (կախյալ) բնութագրիչներին»:

### 3.4. *ta'addā* հասկացությունն ու հիմնական դիատեզի մասին պատկերացումները

Հիմնական դիատեզ (0) հասկացությամբ ընկալվում է իրավիճակի մասնակիցների ու շարահյուսական կառույցի ակտանտների հիերարխիկ կառուցվածքների համապատասխանության խնդիրը (Xo Лo Дo BИч 1970; Xpaкo Bc KИй 1979:13; Пaдy чe Ba 2002):

Եթե ընդունում ենք, որ կրավորական կառույցները մեկնաբանումը Սիբավեյհի մոտ ածանցյալ չէ, անկախ է ներգործական տիպի շարահյուսական կառույցներից, ինչպես նշվեց վերևում, ապա այս դեպքում անհրաժեշտ է առանձնացնել երկու հիմնական դիատեզ: Սա նշանակելու է, որ միևնույն բայը, որպես բառույթ, կրավորական տիպի կառույցում բոլորովին այլ իրավիճակ է արտացոլում, քան ներգործականում: Շարահյուսական երկու այս կառույցները այլևս չեն կարող

<sup>11</sup> Բայի կողմից կառավարվող նախադասության այս անդամները կարող են շարահյուսական միջուկում հայտնվել նաև հնարավոր բոլոր տեսակների *maf'ūl*-ների սպառումից հետո, հմմտ.՝ *«hāqāhi l-'af'āl 'idā ntahat 'ilā mā dakartu la-ka min al-maf'ūlīn [...]»* (*Sībawayhi, al-Kitāb I, 14.11-13; 14.20* հրդ.; 15.12 հրդ.):

<sup>12</sup> «Իրավիճակահեն բնութագրիչների» խնդիրը հետագա ուսումնասիրության կարիք է զգում ու, ամենայն հավանականությամբ, առնչվում է սիբավեյհյան մոդելում «պարագաների» (*zarf*), ինչպես նաև *'amal, ta'addā ilā, šağala bi-* տերմինաբանական եռյակի բովանդակային սահմանների ընկալման հետ: Բացի այդ՝ «իրավիճակահեն բնութագրիչները» կարծես թե մնում ոչ ռելեվանտ բայերի դասակարգման համար:

<sup>13</sup> Հմմտ.՝ *«hāqāhi l-'af'āl 'idā ntahat 'ilā mā dakartu la-ka min al-maf'ūlīn [...]»* (*Sībawayhi, al-Kitāb I, 14.11-13; 14.20* հրդ.; 15.12 հրդ.):

դիտարկվել որպես մեկ միևնույն իրավիճակի երկու առանձին ածանցյալներ: Այլ կերպ՝ արաբական ավանդույթում *ḍuriba zayd-un* և *ḍaraba 'abd-u llāh-i zayd-an* տիպի կառույցները միմյանցից ածանցյալ չեն ու տրամաբանորեն իրավահավասար են.

*Իմաստ* → *տեքստ անցում*

(0) *ḍaraba 'abd-u llāh-i zayd-an*

(0) Հիմնական դիատեզ 1. V + SUB(=A) + OBJ(=PAT)

ինչպես նաև

(0) *ḍuriba zayd-un*

(0) Հիմնական դիատեզ 2. V + SUB(=PAT)

Մեկ հիմնական դիատեզի մասին պատկերացման դեպքում, շարահյուսական երկու այս կառույցներն էլ արտացոլելու են նույնական մեկ իրավիճակ, իսկ կրավորական տիպի կառույցը գնահատվելու է որպես շարահյուսորեն ածանցյալ հիմնականից՝ որպես *ածանցյալ դիատեզ (1)*:

*Տեքստ* → *տեքստ անցում*

(0) *ḍaraba 'abd-u llāh-i zayd-an* → (1) *ḍuriba zayd-un*

(0) Հիմնական դիատեզ՝ V + SUB(=A) + OBJ(=PAT) → (1) ածանցյալ դիատեզ՝ V + SUB(=PAT)

### 3.5. *ta'addā* հասկացությունը իմաստաբանական նվազագույն բաղադրիչների համադրությամբ

*ta'addā* հասկացությամբ ԱԼԱ-ում նկարագրվում են ոչ միայն բայերը, որոնք որպես ստորոգիչներ գործողություն (*'amal*) են արտահայտում (ինչն այս հասկացության՝ անցողականություն ընկալմամբ միակ հնարավոր տարբերակը կլինեն), այլև արաբերենի բոլոր՝ ներառյալ *վիճակ, հատկանիշ* ցույց տվող բայերը: Հասկացության բովանդակային նման ընդգրկման հիմքում ընկած է Սիբավեյհի շարահյուսական մոդելում կարևորագույն այս հատկանիշի հիման վրա արաբերենի բոլոր բայերի վերջնական հնարավոր հաշվարկի գաղափարը (հմմտ.՝ «*hāddā bāb 'ilm kull fi'lin ta'addā-ka 'ilā ḡayri-ka*»; Sibawayhi, *al-Kitāb* II, 239-240; §437):

Մոտեցումը «Գրքում» լուծվում է իմաստաբանական (նվազագույն) բաղադրիչներ առանձնացնելու միջոցով, որոնց հիման վրա էլ դասակարգվում են արաբերենի բայերը: Այդպիսի բաղադրիչներից, ինչպես նաև միևնույն բաղադրիչի երկբևեռման հնարավորություն ընձեռող մեթոդական մոտեցումից է բաղկացած *ta'addā* vs. *lam yata'adda* հակադրումը: Իմաստաբանական բաղադրիչներն այստեղ հետևյալներն են.

*al-ʿafāl allatī hiya ʿa māl: {taʿaddā-ka ʿilā ġayri-ka wa-tūqīʿu-hā bi-hi (al-Kitāb II, 224.14) vs. lam yataʿadda ʿilā mansūb (al-Kitāb II, 226.9)}*

- *ʿtaʿaddā* ~ 'իրավիճակի ու իրավիճակի մասնակիցների միջև կապի տեսակ', 'բայում արտահայտված գործողության անցում'
- *ka* ~ 'իրավիճակում հիերարխիկ ամենաբարձր մասնակից', 'ենթակա'
- *ġayri-ka (ġayru-hu)* ~ 'ինչ-որ մեկը, ինչ-որ բան', 'իրավիճակում հիերարխիկ ամենացածր մասնակից(ներ)', 'խնդիր'
- *mansūb* ~ 'իրավիճակում հիերարխիկ ամենացածր մասնակից(ներ)', 'խնդիր'
- *ʿawqāʿa bi* ~ 'բայում արտահայտված հատկության (գործողություն, արարք, գործունեություն, վիճակ) ու իրավիճակի ամենացածր մասնակիցների միջև կապը', 'բայում արտահայտված գործողության անցումը, հանգումը, ազդեցությունը խնդրի վրա':

#### 4. Ամփոփում

Հաշվի առնելով արաբերենում բայաձևի և ստորոգական միջուկի սահմանների համընկման հանգամանքը *taʿaddā*-ն ԱԼԱ-ում առաջարկում է ընկալման փոխկապակցված երկու շերտ, ի տարբերություն այս հասկացության մինչ այս առանձնացված՝ կա՛մ «բովանդակային»՝ որպես բայի անցողականություն (գործողության իմաստի (*fīʿl*) հանգեցում/անցում), կա՛մ շարահյուսական մեկնաբանման՝ որպես շարահյուսական դիրքերի (մասնավորապես՝ *naṣb*) կառավարում (*ʿamal*):

Նախադասության դիտարկումը իմաստաբանական մակարդակում որպես իրավիճակի (արտահայտված ստորոգիչի՝ բայի միջոցով) ու իրավիճակի պարտադիր (պարտիսիպիանտ) և ոչ պարտադիր (բնութագրիչ) մասնակիցների ամբողջություն, թույլ է տալիս *taʿaddā* հասկացությունում վեր հանել հետևյալ շերտերը.

1. Այս հասկացության միջոցով նշավորվում է (*marked*) ակտանտների (նախադասության անդամների) այն ֆանակը (նաև տեսակը), որը տվյալ բայը կարող է ունենալ ստորոգական կառուցի շրջանակում: Այս առումով բայերը Սիբավեյնի մոտ *միավալենտ* են (*ġayr mutaʿaddī*) կամ *բազմավալենտ* (*mutaʿaddī*), իսկ ստորոգական կառուցի շրջանակում տվյալ բայից կախյալ են հետևյալ անդամները.

1.1. *ġayr mutaʿaddī* բայերից կախյալ նախադասության անդամներ՝ *fāʿil* կամ *mafʿūl<sub>SUB</sub>*

1.2. *muta'addī* բայերից կախյալ նախադասության անդամներ՝ *fā'il*; *maf'ūl*<sub>SUB</sub>; *maf'ūl*<sub>OBJ</sub>; *maf'ūl 'axar*<sub>OBJ</sub>; *'in šī'ta iqtasarta 'alā l-maf'ūl*<sub>OBJ</sub>; *al-'awwal (at-tānī)*; *laysa la-ka 'an taqtašira 'alā l-maf'ūlayn*<sub>OBJ</sub> *dūna l-'axar*: Բացառությամբ առաջին երկուսի՝ մյուս տերմինները Սիբավեյհն ընդհանրացնում է *manṣūb* ձևակերպմամբ (Sībawayhi, *al-Kitāb* II, 226.9):

1.3. Ինչպես *ḡayr muta'addī* այնպես էլ *muta'addī* բայերից (բացառությամբ ֆառավալենտ բայերի) կախյալ նախադասության անդամներ՝ *ism al-ḥadatān*; *al-marra min-hu [min al-ḥadat] wa-l-marratayn wa-mā kāna ḍarban mi-hu [min al-ḥadat]*; *az-zamān*; *kull mā štuqqa min lafz al-fi'l li-l-makān wa-'ilā l-makān*; *mā kāna waqtan fi l-'amākin wa-l-'azmina*:

2. Մյուս կողմից՝ *ta'addā* հասկացությամբ նշավորվում է բայի (ստորոգիչի) և բայից կախյալ նախադասության անդամների (իրավիճակի մասնակիցներ և «իրավիճակահեն ստորիբուտներ») միջև հարաբերության տեսակը:

2.1. Եթե նախադասության անդամների (իրավիճակի մասնակիցների) թիվը մեկից ավելի է, ապա «բայի (ստորոգիչի) միջոցով արտահայտվող տեղեկությունը (լինի հատկանիշ, գործողություն կամ ինչ-որ այլ բան) նախադասության հիերարխիկ կառուցվածքում ամենաբարձր անդամից (առաջին մասնակցից) անցնում/հանգում է ամենացածր անդամներին (երկրորդ, երրորդ մասնակիցներին)» (*al-'af'āl allatī hiya 'a mā l ta'addā-ka 'ilā ḡayri-ka wa-tūqī'u-hā bi-hi*; Sībawayhi, *al-Kitāb* II, 224.14):

2.2. Եթե նախադասության անդամների (իրավիճակի մասնակիցների) թիվը միայն մեկ է, ապա «բայի (ստորոգիչի) միջոցով արտահայտվող տեղեկությունը (լինի հատկանիշ, գործողություն կամ ինչ-որ այլ բան) նախադասության հիերարխիկ կառուցվածքում ամենաբարձր անդամից (առաջին մասնակցից) չի անցնում/հանգում հիերարխիկ ամենացածր անդամներին (երկրորդ, երրորդ մասնակիցներին)» (*al-'amal lam yata'addā 'ilā manṣūb*; Sībawayhi, *al-Kitāb* II, 226.9):

3. *taaddā* հասկացության բովանդակային մեկ այլ շերտի վերհանման հնարավորությունն իրագործվում է դիատեզի (բայական սեռի, ակտանտային ածանցման) հասկացության ներգրավմամբ: Նշվում է, որ Սիբավեյհի նկարագրական մոդելը բայական սեռը, մասնավորապես՝ կրավորական սեռի բայերը դիտարկվում է ոչ թե շարահյուսական մակարդակում, ինչպես վարվում է «ժամանակակից լեզվաբանությունը», այլ ձևաբանական, ինչը և պայմանավորում է երկու՝ ներգործական և կրավորական հիմնական դիատեզների հնարավորություն:

**Գրականություն ցանկ**

1. (Sībawayhi, *al-Kitāb*) = 'Abū Bišr 'Amr b. 'Uṭmān b. Qanbar Sībawayhi (մահ.՝ 180/793). *al-Kitāb*. Vols.1-2, ed. Hartwig Derenbourg. Paris: Impremiere Nationale. 1881. (Hildesheim, New York: G.Olms. 1970).
2. Bobzin, Harmut. (1983). „Zum Begriff der ‘Valenz’ des Verbs in der arabischen Nationalgrammatik“. *The History of Linguistics in the Near East*, ed. by Cornelis H.M. Versteegh, Konrad Koerner and Hans-J. Niederehe, 93-108. Amsterdam and Philadelphia: J. Benjamins.
3. Bolshakov, I.A. & Gelbukh, A.F. (2000). „The Meaning <=> Text Model: Thirty Years After“. *J. International Forum on Information and Documentation*, FID 519:1. (<http://www.gelbukh.com/CV/Publications/2000/Forum-MTM-rus.htm>)
4. Вежбица, А. (1999). «Переходность и возвратность». *Семантические универсалии и описание языков*, ред. Т.В. Булыгина, 44-88. Москва: Язык русской культуры.
5. Givón, Talmy. (1990). *Syntax: A Functional-Typological Introduction*. Amsterdam and Philadelphia: J.Benjamins.
6. Levin, Aryeh. (1979). „The Meaning of ta‘addā al-fi‘l ‘ilā in Sībawayhi’s al-Kitāb“. *Studia Orientalia Memoriae D.H. Baneth Dedicata*. 193-210. Jerusalem.
7. Lyons, John. (1980-1983). *Semantik*. Bde.1-2. München: C.H.Beck.
8. Мельчук И. А. (1999). *Опыт теории лингвистических моделей "Смысл <=> Текст"*. 2-е изд., доп. Москва: Язык русской культуры.
9. Mosel, Urlike. (1975). *Die syntaktische Terminologie bei Sibawaih*. Inaugural-Dissertation. München.
10. Owens, Jonathan. (1988). *The Foundations of Grammar: An Introduction to Medieval Arabic Grammatical Theory*. Amsterdam and Philadelphia: J.Benjamins.
11. Падучева, Е.В. (2002). «Диатеза и диатетический сдвиг». *Russian Linguistics* 26.179-215.
12. Плуноян, В.А. (2003). *Общая морфология. Введение в проблематику*. УРСС: Москва.
13. Saad, George Nehmeh. (1979). „Sībawayhi’s Treatment of Transitivity“. *Al-‘Arabiyya* 12.83-88.
14. \_\_\_\_\_. (1982). *Transitivity, Causation and Passivization: A Semantic-syntactic Study of the Verb in Classical Arabic*. London: Kegan Paul International.

- 
15. \_\_\_\_\_. (1983). „On Active and Non-active Causativizable in Arabic and Hebrew“. *Zeitschrift für arabische Linguistik* 10.71-79.
  16. Tesnière, Lucien. (1980). *Grundzüge der strukturalen Syntax*. Stuttgart: Klett-Cotta.
  17. Versteegh, Cornelis H. M. (1977). *Greek Elements in Arabic Linguistic Thinking*. Leiden: E.J.Brill.
  18. Холодович А.А. и Мельчук, И.А. (1970). «К теории грамматического залога: определение, исчисление». *Народы Азии и Африки* 4.111-124.
  19. Храковский, В.С. (1979). «Пассивные конструкции». *Типология пассивных конструкций: Диатезы и залогов*, отв. ред. В.С. Храковский, 5-45. Ленинград: Наука.